

## ՆՐԱՉՕՆ



Ուխտավորներից ամենալրակյացն էր: Նրան չճանաչողին կթվար, թե անտարբեր է ամեն ինչի հանդեպ, թե մի քանակ ակամա ճամփորդող է: Ի՞նչ է ասում նրա խոսուն լռությունը. միայն Աստված գիտեր ու ինքը:

ՆրաչՕն այս մեծ աշխարհում դեռ էն գլխից գծել, ձևավորել էր իր փոքրիկ աշխարհը, դեպի ուր գնում էր հիմա՝ ճակատը հենած մեքենայի պապուհանի ապակուն, հայացքը անցնող քաղաքների, մարքում իր ձևավորած աշխարհը, այդ աշխարհի՝ իր գծած սահմանները: Թե անգամ այդ աշխարհը միրաժ է, քաղաքային, մրցակցային մի բան, բայց միևնույնն է, այն կա, ու այն իր աշխարհն է, և ՆրաչՕն ոչ մի սահման էլ չի անցել. նա շարունակում է ճամփորդել իր երկրում: Ինքն ուզում է, որ դա հենց այդպես էլ կոչվի, որ Կարս մարմի ինչպես իր ծննդավայր Լոռվա ցանկացած քաղաք կամ գյուղ, մարմի իր ուզած օրն ու իր ուզած պահին: Այդպես ազատ մարմի իր այդ աշխարհը, ու, բան է, թե իրեն քրվող հարցեր լինեն, պատասխաններ ունենա:

ՆրաչՕն փազնապով ու փոթորկուն սրբով ճամփա ելած ճշմարիտ ուխտավոր էր, ինչպես երկար փարիներ հայրենի քունից հեռացած պանդուխտն էր փուն դառնում այն ապրումներով, թե ի՞նչ վիճակում կգտնի իր հայրական քունը, և ինչպե՞ս կընդունվի այդքան երկար բացակայելուց հետո: Լռակյաց ու քրքուր՝ ամբողջ ճանապարհին ՆրաչՕն իր հոգին քրքրում էր, պատասխաններ փնտրում այն հարցերի, որ էրգրում պիտի քրվեին իրեն: Գուցե մեր խմբից բոլորին չէ, բայց ՆրաչՕն հարցեր քրվելու էին. նա գիտեր, որ Կարսում էլ, Անիում էլ իրեն քրվելիք հարցեր կունենան եկեղեցու գմբեթից ընկած էն քարը, ճաքած պարը, այգու էն ծառը, որի քակ Չարենցն է նստել, էն փայտե հնաբույր դուռը, որ բացել-փակել են Աբգար աղան ու Եղիշեն:

Ամենքը չէ, որ կրեսնեն հարց քրվողներին, բայց ՆրաչՕն կրեսնի նրանց: Կրեսնի Կարսի հայկական քների՝ կախովի կողպեքով գոց երկփեղկ դռների ճեղքերից նայող նրանց հայացքները.

– Մերոնց քեսն՛լ ես,- կհարցնեն նրանք:

Իհարկե քեսնել է: Ո՛չ միայն քեսնել, այլ մեկ առ մեկ հեքները գրուցել է Գյումրիում, Նոր Մերասփայում, Նոր Արեշում...

Նոր, Նոր... որքան այդպիսի Նոր նախածանցներ հայտնվեցին մեծ հայրենիքի այն մի բուռ քարածքի վրա, ուր ավերմունքը դադար առավ: Նաչիվը պահե՛լ է իր հեք գրուցած մարդկանց, իր գրած ակնարկների: Ու հիմա նա գնում է նրա՛նց երկիրը, թե՛ իր գծած, ձևավորած աշխարհը: Իր ու նրանց միջև քարքերություն կա՞:

Ինչպիսի՞ն էին իր ակնարկները, ի՞նչ աղբյուր ունեին: Աղբյուրը սե՛րն է մարդու հանդեպ, այն մարդու, որ հեքո դարձել է իր ակնարկի հերոսը: Իր այդ սերը ՆրաչՕն չի նկարագրում (սերը ի՞նչ նկարագրես). նա պարմում է այս, այդ, այն մարդու մասին՝ ինչպիսին նա կա: Պարմում է և ապավինում ընթերցողի վերաբերմունքին. նա իր հերոսի մասին երբևէ չի ասում՝ սիրելի մարդ. թողնում է, որ դու նկարես, զգաս նրա սիրելի լինելը: ՆրաչՕն համար սիրելի բառը ավանանների, այլևայլ հավելումների կարիքը չունի, ինչպես, ասենք, համեմատելի չունեն հայրենիքը, հայրենի հողը կամ մայրենի լեզուն, ինչպես մոր հանդեպ քաճած որդու սիրույն չի լինի հավելել շար սիրել բառերը. սիրել բառի կողքին շա՛տը որն է:

Եվ ահա այս ՆրաչՕն Կարսի ճամփին՝ ինքնամփոփ, ինքն իր մտքերի ու ժամանակի հետ կռիվ քալով, պարտասպում է Չարենցի հետ «հանդիպման»։ Նա հենց այդպես էլ ասում է՝ գնում ենք Չարենցի հետ հանդիպելու։ Ըստ ՆրաչՕի, Կարսը Չարենցն ինքն է, Առաքելոց եկեղեցին էլ է Չարենցը, քո հլա՝ մագութի Նամոյի փունն էլ, դայֆենճի Սեթոյի սրճարանն էլ։ Տեսնես այդ փները պահպանվե՞լ են։

...Երբ Մարտինը մեզ ուղեկցեց Էրզրումի փողոցի թիվ 100 փան մոտ, ՆրաչՕն փլվեց. դեմը անձածկ մի կիսախարխուլ պապ էր, երկփեղկ մի հնարույր դուռ։ Նրա փխրությունը, նրա լռությունն ավելի թանձրացավ։

«Այնպեղ գերեզմանը չենք գտնում, այսպեղ էլ փունն է այս վիճակում»։ ՆրաչՕն սա սասց ինքն իր համար, ինքն իր հոգին քրքրելով։ «Այնպեղ»-ը Երևանն է, ուր երկու օր առաջ Չարենցի հուշաքարի մոտ հավաքվածների մեջ հայացքով դեպի բազմաթիվ աշակերտները, որոնք արտասանել էին ու արտասանելու էին պարտասպ, ժպտալով սասց. «Ի՞նչ լավ է, որ այս էրէխեքն այսպեղ են»։ Նեպո՝ նրանց ուսուցիչներին սասց. «Ապրեք դուք, որ Չարենցին միշտ երեխաների մոտ եք պահում»։ Ու հիմա, երբ Չարենցի փան մոտ ուխտավորների խումբը հարհար, գույգ-գույգ մոտենում է լուսանկարվելու, ՆրաչՕն մի կողմ է քաշվել ու փրփում նայում է ոչ թե լուսանկարվող խմբի անդամներին, այլ մեր շուրջը հավաքված փեղաբնակներին։ Ի՞նչ է ուզում խոսել նրանց հետ։ Գուցե ուզում է հարցնել, թե այս փունն ինչու է այս վիճակում, թե ինչո՞ւ մի ցուցանակ չկա, որ ազդարարի թե սա այն փունն է, ուր իր մանկությունն է ապրել Չարենցը։

Միտելի ու միամիտ Նրաչ...



*Շարունակելի*